Հաճախորդի իրավունքներ

Ֆասթ Բանկի հաճախորդն իրավունք ունի ստանալ «Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի վերաբերյալ **«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի** 20-րդ հոդվածի 3-րդ մասով, 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 16-րդ, 120-րդ հոդվածներով, 126-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկության պատճենները: Սույն տեղեկությունների տրամադրման համար որևէ սակագին չի սահմանվում:

Վերոնշյալ տեղեկությունները բանկը տրամադրում է ցանկացած անձի գրավոր դիմումը ստանալուց 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում (եթե դիմումի մեջ այլ ժամկետ նշված չէ):

Տեղեկությունը տրամադրվում է դիմումի մեջ նշված եղանակով, իսկ դրա բացակայության դեպքում՝ այն եղանակով, որով ուղարկվել է դիմումը: Հաճախորդին տրամադրվող տպագիր տեղեկության համար գանձվող սակագինը սահմանվում է բանկի ոչ ֆինանսական ծառայությունների սակագներով:

«Ֆասթ Բանկ» ՓԲԸ-ի կողմից իր հաճախորդների բողոքների, բողոք-պահանջների ընդունման/ստացման և վերջիններիս արձագանքման գործընթացը սահմանվում է «Հաճախորդների բողոքների կառավարման ընթացակարգ»-ով:

Ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների կողմից բողոք-պահանջի ներկայացման հայտ

Իրավաբանական անձ/Անհատ ձեռնարկատեր հաճախորդի կողմից բողոք-պահանջի ներկայացման հայտ